# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Մայիսի 1-ին, կիրակի. - Զ. կիր.:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Հովհ. Ժ 10) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 68):

*Մայիսի 5-ին, հինգշաբթի. - Խ. օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այսօր համբարձմար փառօք ի յերկինս եւ զկուսածին մարմինդ Քո հրաշափառապէս լուսազարդեցեր» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 70):

*Մայիսի 8-ին, կիրակի. - Է. կիր.: Երկրորդ Ծաղկազարդ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 73):

*Մայիսի 15-ին, կիրակի. - Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը: «Հայր մեր»-ից առաջ ընթերցվեց Ներսես Լամբրոնացու Ս. Հոգու Գալստյանը նվիրված ներբողյանը:

*Մայիսի 22-ին, կիրակի. - Ա. կիր. զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբեղա Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Հաւատք քո կեցուցին զքեզ» (Ղուկ. ԺԸ 42) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 76):

*Մայիսի 28-ին, շաբաթ. - Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մտից նորա ի Վիրապն:*

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր աբեղա Կնյազյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ճշմարտութեան ձայն Սրբոյն Գրիգորի, օրհնեսցուք զլոյս անսկիզբն, բարձր արարէք զնա յաւիտեան» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 78):

*Մայիսի 29-ին, կիրակի. - Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 81):